# ՄՐՑՈՒՅԹ RN#21-003

*Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ ծրագրի շրջանակներում  գինու արտադրության հետ կապված սարքավորումների և պարագաների ձեռքբերման, առաքման, տեղադրման և սկզբնական գործարկման*

<u>Գնառաջարկի հրավեր</u>

Գնառաջարկների ներկայացման սկզբնաժամկետ՝ **22 հունվարի 2021թ.**

Գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետ՝ **08 փետրվարի, 2021թ., ժամը 16:00**

Հարգելի հայտատու,

1. Սույն հրավերով "Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն" հիմնադրամը ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող "Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ" ծրագրի շրջանակներում հրավիրում է Ձեզ ներկայացնելու սույն հրավերին կից **Հավելված 1-ում** ընդգրկված ապրանքների համար Ձեր գնառաջարկը: Հավելված 1-ում տրված է պահանջվող ապրանքների մասնագրերը:

***Ապրանքը պետք է լինի նոր չօգտագործված:***

***"Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ" ծրագրի շրջանակներում կանխավճար չի կատարվում: Ապրանքի համար վճարումը կատարվում է ապրանքի նախնական գործարկումից հետո:***

***Ապրանքների առաքումը պետք է կատարվի վաճառողի/մատակարարի կողմից: Առանձին ապրանքների առաքման վայրը նշված է Տեխնիկական Առաջադրանքում համապատասխան սարքավորման նկարագրությունից հետո:***

## ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ՎԵՋՆԱԺԱՄԿԵՏԸ

**Կից ներկայացված ձևաչափին համապատասխան** պատրաստված Ձեր գնառաջարկը ընդունելի է տպագիր՝ կնքված փակ ծրարով:

Հայտը, որն իր մեջ պետք է ներառի գնառաջարկը և համապատասխան տեխնիկական փաստաթղթերը, առկայության դեպքում կատալոգ(ներ) և այլ տպագիր կամ առնչություն ունեցող նյութեր՝ **<u>ներառյալ տեղեկատվություն ապրանքատեսակների արտադրության երկիրը,</u>** պետք է **մինչև 2021 թ. Փետրվարի 8-ի , ժամը 16:00** ներկայացվի "Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն" հիմնադրամի գրասենյակ, որի հասցեն է՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40:

Հարցերի դեպքում կարող եք գրել samvel.dallakyan@card.am հասցեին:

Հարցերի պատասխանները կտեղադրվեն կազմակերպության վեբ կայքում՝
**http://card.am/hy/tenders**
համապատասխան մրցույթի ***«հարց ու պատասխան»*** հղման մեջ:

## ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը սոսնձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա գրվում են ԲՆՕՐԻՆԱԿ և ՊԱՏՃԵՆ բառերը:

Ծրարի վրա նշվում են՝

- ✓ Պատվիրատուի անունը և հայտի ներկայցման վայրը /պատվիրատուի հասցեն/
- ✓ Հայտարարության անունը և համարը
- ✓ Չբացել մինչև հայտերի բացման նիստը բառերը
- ✓ Հայտատուի/ընկերության անվանումը, գտնվելու վայրը, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը

Գնառաջարկը պետք է լինի ստորագրված հայտատուի լիազոր ներկայացուցչի կողմից, լինի կնքված հայտատուի պաշտոնական կնիքով և դրված լինի փակ ծրարի մեջ, որի վրա պետք է լինի նշված հայտատու կազմակերպության անվանումը:

## ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՕՐԸ և ԺԱՄԸ

1. Հայտերի բացումը տեղի կունենա մրցույթի վերջնաժամկետի օրը՝ ՀՀ, Երևան 0037, Ազատության 1\21-40 հասցեում, ժամը 17:00-ին, հանձնաժողովի անդամների ներկայությամբ: Հայտատուները հրավիրվում են մասնակցելու հայտերի բացմանը:

2. Գնառաջարկները կգնահատվեն հանձնաժողովի կողմից և մասնակիցները կտեղեկացվեն արդյունքների մասին էլեկտրոնային փոստով: Հաջողակ հայտատուն կտեղեկացվի լրացուցիչ:

3. Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Բոլոր գնառաջարկները, որոնք ներկայացվել են սույն կանոնի խախտմամբ, կմերժվեն:

4. <u>Գները:</u> Գները պետք է առաջարկվեն ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող “Գյուղական տնտեսական զարգացում – նոր տնտեսական հնարավորություններ” ծրագիրը միջպետական պայմանագրի հիման վրա ազատված է ԱԱՀ-ից և ծրագրի շրջանակներում կտրամադրվի ԱԱՀ-ից ազատելու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

5. <u>Գնառաջարկների գնահատում:</u> Առաջարկները, որոնք կհամապատասխանեն տեխնիկական պահանջներին, կգնահատվեն արժեքների և տեխնիկական պահանջների համապատասխանելիության համեմատությամբ: Գնահատելիս Պատվիրատուն առաջնորդվելու է հետևյալ չափորոշիչներով՝

(ա) Առաջարկվող ապրանքների տեխնիկական մասնագրերի համապատասխանությունը սույն հրավերով ներկայացված պահանջներին

(բ) Առաջարկված գինը

Գնառաջարկները գնահատելիս գնառառաջարկում անհամապատասխանություններ լինելու դեպքում Գնորդը յուրաքանչյուր առաջարկի համար կսահմանի գնահատման գինը՝ ուղղումներ կատարելու միջոցով, հետևյալ դեպքերում՝

(ա) որտեղ տարբերություն կա թվերով և տառերով արտահայտված գումարների միջև; տառերով գրված գումարը որոշիչ է,

(բ) որտեղ տարբերություն կա միավոր արժեքի և համապատասխան տողի ընդամենի միջև, որը ձևավորվում է միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքում; նշված միավոր արժեքը որոշիչ է,

(գ) եթե մատակարարը հրաժարվում է ընդունել ճշտումները, ապա իր գնառաջարկը մերժվում է:

6. Վավերականություն: Ձեր գնառաջարկը պետք է ուժի մեջ լինի առնվազն քառասունհինգ (45) օր՝ սկսած գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետից:

7. **Պատվերի Շնորհում:** Պատվիատուն պայմանագիր կկնքի այն Հայտատուի հետ, ում գնառաջարկը առավելագույնս կհամապատասխանի սույն գնառաջարկի հրավերի պահանջներին և վերոնշյալ չափորոշիչներին:

## ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

_________(Ամսաթիվ)

Ում: “Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն” հիմնադրամ

ՀՀ, ք.Երևան, Ազատության 1\21-40

Մենք *(Կազմակերպության անունը)* առաջարկում ենք առաքել RN#21-003 մրցույթի Տեխնիկական առաջադրանքում ներկայացված ապրանքները հետևյալ գնով

| № | Անվանում | Քանակը | Միավորի գինը ՀՀ դրամ առանց ԱԱՀ | Ընդամենը ՀՀ դրամ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|---|
| 1 | Գինու պահպանման պահաման 2.5 տ | 1 հատ | *(գումարը թվերով և բառերով)* | *(գումարը թվերով և բառերով)* |
| 2 | Գինու պահպանման պահաման 3 տ | 1 հատ | *(գումարը թվերով և բառերով)* | *(գումարը թվերով և բառերով)* |
| 3 | Գինու պահպանման պահաման 1 տ | 1 հատ | *(գումարը թվերով և բառերով)* | *(գումարը թվերով և բառերով)* |
| 4 | Գինու պահպանման պահաման լողացող կափարիչով 1 տ | 3 հատ | *(գումարը թվերով և բառերով)* | *(գումարը թվերով և բառերով)* |
| 5 | Գինու պահպանման պահաման լողացող կափարիչով 230 լ | 2 հատ | *(գումարը թվերով և բառերով)* | *(գումարը թվերով և բառերով)* |
| 6 | Էլեկտրական գինու մամլիչ 480լ | 1 հատ | *(գումարը թվերով և բառերով)* | *(գումարը թվերով և բառերով)* |
| 7 | Գինու շերտավոր ֆիլտր 20X20 | 1 հատ | *(գումարը թվերով և բառերով)* | *(գումարը թվերով և բառերով)* |
| 8 | Շշալցման սարք 4 ծորակով | 1 հատ | *(գումարը թվերով և բառերով)* | *(գումարը թվերով և բառերով)* |
| 9 | Խցանող սարք | 1 հատ | *(գումարը թվերով և բառերով)* | *(գումարը թվերով և բառերով)* |
| 10 | Գինենյութի մղման պոմպ | 1 հատ | *(գումարը թվերով և բառերով)* | *(գումարը թվերով և բառերով)* |
| 11 | Շշալցված շշերի լվացող և չորացնող մեքենա | 1 հատ | *(գումարը թվերով և բառերով)* | *(գումարը թվերով և բառերով)* |

Պայմանագիրը ստորագրելուց հետո պահանջվող առաքումը ամբողջ ծավալով կատարելու համար մեզ անհրաժեշտ կլինի *(օրերի քանակը)* օր:

Միաժամանակ մենք հասկանում ենք, որ դուք Ձեզ իրավունք եք վերապահում չեղյալ համարել մրցույթը, եթե ներկայացված Գնառաջարկները գերազանցում են տվյալ ծրագրի համար

նախատեսված բյուջեն կամ չեն համապատասխանում չափորոշիչներին, կամ ներկայացված են խախտումներով:

Մեր գնառաջարկը ուժի մեջ է *(օրերի քանակը թվերով և բառերով)* օր՝ սկսած սույն մրցույթի համար սահմանված գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետից:

Մենք սույնով հաստատում ենք, որ այս Գնառաջարկը համապատասխանում է առաջարկի փաստաթղթերով պահանջվող Գնառաջարկի Վավերականությանը:

Լիազոր անձի ստորագրությունը ________________________________________

Ստորագրողի անունն ու պաշտոնը ___________________________________

Հասցե ________________________________________

Հեռ. __________________________________________

Էլ.փոստ ________________________________________

# ՀԱՎԵԼՎԱԾ 1

# Տեխնիկական առաջադրանք

### 1. Գինու պահպանման պահաման 2.5 տ

- Զլանաձև
- Պետք է ունենա առնվազն 3 ոտքեր
- Վերևի և ստորին հատվածները պետք է լինեն կոնաձև
- Պետք է պատրաստված լինի AISI 304 տեսակի չժանգոտվող մետաղից

Ապարագրություն՝

- Վերին դռան տրամագիծը՝ առնվազն 400 մմ
- Երկկողմանի փական 1 ¼” PVC
- Ունենա սանդուղք
- Ներքևի դռան չափերը՝ առնվազն 440x310 մմ
- Ունենա ջերմաչափ
- Ունենալ լցման մակարդակի ցուցիչ
- Ունենա փական DIN 50
- Տարողությունը՝ 2.5 տոննա

**Պետք է առաքվի Արարատի մարզ, Փոքր Վեդի համայնք:**

### 2. Գինու պահպանման պահաման 3 տ

Տեխնիկական տվյալներ՝

- Զլանաձև
- Ունենա առնվազն 3 ոտք
- Վերևի և ստորին հատվածները լինեն կոնաձև
- Պատրաստված լինի AISI 304 տեսակի չժանգոտվող մետաղից

Ապարագրություն՝

- Վերին դռան տրամագիծը՝ առնվազն 400 մմ է
- Երկկողմանի փական 1 ¼” PVC
- Ունենա սանդուղք
- Ներքևի դռան չափերը՝ առնվազն 440x310 մմ

- Ունենա ջերմաչափ
- Ունենա լցման մակարդակի ցուցիչ
- Տարողությունը՝ 3 տոննա

**Պետք է առաքվի Արարատի մարզ, Փոքր Վեդի համայնք:**

## 3. Գինու պահպանման պահաման 1 տ

- Լինի փոփոխական ծավալով/լողացող կափարիչով
- Պահամանը պատրաստված է չժանգոտվող պողպատից
- Կափարիչի եզրերին կամերա, որը կարգավորվում է օդամղիչ պոմպով
- Տարողությունը՝ 1 տոննա

**Պետք է առաքվի Արարատի մարզ, Փոքր Վեդի համայնք:**

## 4. Գինու պահպանման պահաման լողացող կափարիչով 1 տ

- Լինի փոփոխական ծավալով/լողացող կափարիչով
- Ունենա առնվազն երեք եռակցված ոտք, չափման սանդղակ, ծորակ
- Փականը DIN 40: Պատրաստված է չժանգոտվող պողպատից AISI 304
- Տարողությունը՝ 1 տոննա

**Պետք է առաքվի Տավուշի մարզ, Աղավնավանի համայնք:**

## 5. Գինու պահպանման պահաման լողացող կափարիչով 230 լ

- Տարողությունը՝ 230լ
- Լինի փոփոխական ծավալով/լողացող կափարիչով
- Պահամանը պատրաստված է չժանգոտվող պողպատից
- Կափարիչի եզրերին կամերա, որը կարգավորվում է օդամղիչ պոմպով

**Պետք է առաքվի Արագածոտնի մարզ, Կարին բնակավայր:**

## 6. Էլեկտրական գինու մամլիչ 480լ

- Պատրաստված լինի չժանգոտվող պողպատից:
- Շրջանակը լինի ներկված:
- Ունենա ձեռնային և էլեկտրական կառավարման համակարգ
- Շարժիչը միաֆազ կամ եռաֆազ է

**Պետք է առաքվի Արագածոտնի մարզ, Կարին բնակավայր:**

## 7. Գինու շերտավոր ֆիլտր 20X20

- Կախված ֆիլտրի շերտերի տեսակից հնարավոր լինի իրականացնել կոպիտ ֆիլտրում և նուրբ ֆիլտրում:
- Ֆիլտրի գինի, փրփրուն գինի, ծիթապտղի յուղ, քացախ, բուսական արտադրանք, լիկյորներ, գարեջուր և այլն:
- Ունենա AISI 304 չժանգոտվող պողպատից պոմպ և փական
- Շերտերի քանակը՝ առնվազն 10 հատ
- Արտադրողականությունը՝ 300 լ

**Պետք է առաքվի Արագածոտնի մարզ, Կարին բնակավայր:**

## 8. Շշալցման սարք 4 ծորակով

Նախատեսված լինի հյութերի, գինու և այլ տեսակի հեղուկներ շշալցնելու համար:

- Սարքը ամբողջովին պատրաստված լինի AISI 304 չժանգոտվող պողպատից:
- Ծորակների քանակը՝ 4 հատ
- Արտադրողականությունը՝ 480լ/ժ

**Պետք է առաքվի Տավուշի մարզ, Աղավնավանք համայնք:**

## 9. Խցանող սարք

- Նախատեսված լինի բնական, արհեստական և ագլոմերացված խցանների համար:
- Կորպուսը լինի AISI 304 չժանգոտվող պողպատից
- Խցանի տրամագիծը՝ առնվազն 26-45 մմ բարձրությունը մինչև 45 մմ
- Շշի բարձրությունը՝ 240-400մմ սահմանում

**Պետք է առաքվի Տավուշի մարզ, Աղավնավանք համայնք:**

## 10. Գինենյութի մղման պոմպ

- Էլեկտրական, չժանգոտվող պողպատից պոմպ
- Արտադրողականությունը՝ 300 լ/ր
- Միացումը՝ DIN 65x65
- Էլեկտրական միացում՝ 400Վ
- Շրջապտույտը՝ առնվազն 700 անգամ/րոպեում
- Տարողությունը մինչև 800 կգ

**Պետք է առաքվի Տավուշի մարզ, Աղավնավանք համայնք:**

## 11. Շշալցված շշերի լվացող և չորացնող մեքենա

- Արտադրողականությունը առնվազն 1.000 շիշ / ժամ:
- Մեքենան ամբողջովին հագեցած լինի օպերատորի համար անվտանգության համակարգերով:
- Արագության փոփոխման հնարավորություն (ինվերտոր):
- Շշի գլխիկի, հատակի, իրանի առանձին լվացման հնարավորություն:
- Շշի չորացումն ապահովվի ֆիլտրված օդի միջոցով:
- Ունենա շշերի կուտակումից խուսափելու համար նախատեսված կանգ. համակարգը:
- Շշի մուտքի հատվածը ունենա առանձնահատկություն, որը նախատեսված լինի նաև ավտոմատ սարքից ընդունման համար, առանց մարդու միջամտության:
- Շշի ելքի հատվածն ապահոված լինի հատուկ աստիճանի անցողականությամբ դեպի ցանկացած պիտակավորման սարք,առանց մարդու միջամտության:
- Ամբողջությամբ պատրաստված լինի սննդային չժանգոտվող պողպատից -AISI 304:
- Պահանջվող էլեկտրական լարում 380 Վ+ Ն/ 50 Հց:
- Հզորությունը առնվազն 5Կվտ 20Ա:
- Ջրի սպառումը առնվազն 30/45 լիտր /ժամ:
- Օգտագործվող օդի ճնշումը մինչև 4 բար.:
- Աղմուկի մակարդակը համապատասխան UNI-7712 ստանդարտներին 55 դԲ (Ա) / 70 դբ (Ա):
- Արտադրվող տաք օդի ջերմաստիճանը +20 °C-ով սենյակայինից:
- Հնարավոր լինի տարբեր տրամագծի շշերի լվացում կենտրոնական աստղի փոփոխմամբ:
- Մեքենայի շահագործման պայմանները՝ 5 ° C-ից 45 ° C ջերմաստիճան և 70% -ից ոչ ավել հարաբերական խոնավություն:

**Պետք է առաքվի Վայոց Ձորի մարզ, Եղեգնաձորի քաղաք:**